Անտառը թըշնամութեամբ մ'անտառին հետ վարուելով.
Սայրասուր երկաթներէ կըտրուած՝ գետին կը փռուին
Սըրբազնուէր արմաւենիք և վայրենի հացիներ,
Տըխրադէմ շոճք և նոճիք, նըշդարենիք և սարոյք,
Բեւեկնիք սադարթակեղ, եղեւնափայտք և սօսիք.
Եւ կընձնիք՝ որոց հետ տեղ տեղ որթատունկք գըրկախառն,
Ծամածուռ ոստըններով կըռթնած՝ երկինք կարձրանան։
76. — Ոմանք ալ թեղօշներն և այլք կաղնիք կը սղոցեն,
Որոնք բիւր անգամ փոխեր են նորանոր տերեւներ,
Բիւրաւոր անգամներ ալ հողմոց դէմ քաջութիւնն՝
Անսասան դիմադրութեամբ՝ են նըւաճեր ու սանձեր.
Ուրիշներ ալ կը բեռցնեն ճըռնչող սայլից շալակին՝
Հոտաւէտ կաճղի հակեր ոռնիներու և մայրեաց.
Զէնքերու շառաչմանէն և խառնիխուռըն շըփոթէ
Կը թողուն որջերնին գազանք, թըռչունք բոյներնին։

ՏԱՍՍՕ. Ազատուած Երուսաղէմ. (Երգ Գ.)։

Թարգմ. Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

# ՄՈՎՍԷՍ Ի ՆԱԲԱՒ

(Զօնեալ առ Վեր. Հ. Դաւիթ Նազարէթ)

Արեգակն ըղճառագայթս իւր երկայնեալ ձըգէր առ չեղ
Բոցանշան պայծառ ծագեալ ըզկատարօք վրանաց գաշտին,
Մեծամեծս յօրս ըզկըղի ոսկէճաճանչ հեռըս թողեալ
Ի թաղելն իւրում ծածկել ի յաւազուտս անապատաց.
Գոյն ոսկի ընդ ծիրանւոյ ըզգաշտավայրն համակէին։
Ի լեառն անդուստ ի Նաբաւ ելեալ Մովսէս այրն Աստուծոյ,
Եւ զտեղի առեալ անդէն, հեզ անհըրպարա ակնարկութեամբ,
Շուրջ ածէր պարապով ի հեռաւորս գաշտաց տեսիլ։
Տեսանէ նախ ըզՓասգա, զորով պսակին շուրջ թըզենիք,
Անդր ապա քան ըզլերինս յառեալ վխտէ նա զՄանասէ
Եւ զամենայն խակ երկիրն Գաղաադու և զԵփրեմի,
Որք կային ընդ աջմէ իւրմէ մէն մի պարարտ երկիրք։
Նըշմարէ և ընդ հարաւ զանքեր ըզմեծ երկիրն Յուդայ,
Եւ ըզծագս իւր աւազինս՝ ուր նիրհէ ծովն արեւմտից։
Բացադոյն սըփռի հովիտ այլապաճեալ յերեկորայ,
Ուր Նեփթաղիմն երեւի, ձիթաստանեօք պըսակեալ։
Ի գաշտավայրս յորս շըքեղ հեշտ խաղաղիկ փըլփթին ծաղիկք՝
Յակն անկանի Երիքով, որ է երկիր արմաւենեաց.
Եւ հերձիք մարսաւորք ի Փոգովրայն գաշտաց անտի
Մինչեւ անդր ի Սեգովր անտառացեալ տարեալ ձըգին։

digitised by A.R.A.R.@

Տեսանէ զՔանանաստան, եւս և զեզերըն Պաղեստեայ,
Ուր գիտէ զի ոչ տացի նորա տեղի գերեզմանի։
Նայի շուրջ, ըզձեռս իւր յաղթ տարածանէ զԵբրայեցւոց,
Ապա ի լեառն անդր ի վեր մատուցանէ զընթացս յառաջ։

*
* *

Արդ եկեալ լըցեալ ըզդաշտս Մովաբու ըզմեծածիգս,
Եւ ցըլեռնոտըն սըրբոյ Սարոյն գըրգեալք յառաջամուխ՝
Որդիքն Իսրայելի խուռն ի հովտի անդ զեռայլին
Նըման հասկաց ցորենոյ՝ զորս Հիւսիսին մըրըրիկ շունչ·
Ի ժամէն իսկ հեռէ՝ յորում ուաղք ոսկեհատիկ
Տամկանան ի շաղ ցօղոյ, և ի հացեաց ի գագաթունս
Շիվք շիվք մարգարտափայլք տարաբերեալ ճօճեալ ճեմին,
Մարգարէն հարիւրեմեան, ամօք փառօքըն պըսակեալ,
Մեկնեալ յուղի էր անկեալ, կանխեալ առ Տէր տատօսել։
Բոց գըլխոյ նորա զամբոխն առնէր ըզկնի իւր միապէշ։
Եւ մինչ երթեալ հասանէր բարձր ի կատար մեծի լերինն,
Եւ ճակատ իւր խառնեալ ծածկէր ի սուրբ ամպն Աստուծոյ,
Որ ըզվայրսըն բարձրութեան փայլատակմըքըն պատէր շուրջ,
Ծըխէին խունկք ի քարեզէն սեղանս ընդ ցիրն առհասարակ.
Եւ ի բերանս անդ հարեալ փաթուռն բիւրուց Եբրայեցւոց,
Ի հոտ խընկոյն ապացեալոյ՝ զոր նեքկանէր արեւ յոսկի,
Հանէին միահամուռ նուիրական երգս օրհնութեանց.
Եւ որդիք Ղեւեայ բարձր ի մէջ խորանն արձանացեալ,
Հանգոյն նոճեաց՝ զորոց զատիւք ուաղք շարժեալ խըլըրտիցին,
Միաբանեալ տաւղօքն իւրեանց ընդ բարբառոյ ժողովրդեանն,
Ջերգս յերկինս առաքէին զթագաւորին թագաւորաց։

*
* *

Եւ կացեալ Մովսիսի անդ առաջի Տեառըն յոտին՝
Ընդ ամպըն թանձրամած խօսէր ՚նդ նըմա դէմ յանդիման.
Արկանէր առ նա բողոք. « Զի՞ւ եւս հասեալ է ինձ վախճան,
Ցո՞վ ուրեք կամիցիս զի յածիցայց ես տակաւին.
Կեցի՞ց ես միշտ այսպէս հըզօր, զատեալ մեկնեալ ի մարդկանէ.
Հաճեաց թոյլ առնել ինձ զի ննջեցից ըղքուն երկրի։
Զի՞նչ մեղայ առաջի քո, զի զու առեալ զիս ընտրեցեր.
Ըզժողովուրդ քո վարեալ ածի ես ուր և կամեցար.
ՅԱւետեացն երկիր ահա մերձեալ հասեալ են ոտք նոցա.
Ա՛յլ ոք թող յայսմհետէ կացցէ միջնորդ ընդ քեզ և ընդ նոսա,
Ըզխըստերախն Իսրայէլ ա՛յլ ոք թող սանձիւ նուաճեսցէ,
Ըզմատեանն իմ ա՛յլ առցէ, և զգաւազան իմ ա՛յլ տարցի։

*
* *

« Ըզմի՞ դէպ համարեցար անյոյս առնել զանձն իմ իսպառ,
Եւ ոչ ետուր զի յիմում արդիւնութեան կացից մարդ սուրբ.

digitised by A.R.A.R.@

Այն զի ոչ հատուր ինձ գտանել անդի գերեզմանի
Անդուստ ի Քորեբայ և այսր ի սնարս Նաբաւայ։
Աւա՜ղ, ի մէջ իմաստնոց դու իմաստուն զիս արարեր.
Մատն իմ եղեւ առաջնորդ թափառական ժողովրդեանս.
Ի բըռանց գըլուխս ածի կրակատեղաց բարկութիւն.
Որ գալոցն են զարք՝ տացեն հարկաւ զօրէնս իմ ի պաշտօն.
Ըզհնագոյնն իսկ ի մարդկան գերեզմանաց յայտնեալ բանամ,
Մահ ինքնին ըզձայն իմ պատանէ ձայն մարգարէի.
Մե՜ծ եմ յոյժ, ի վերայ ազանց հանգչին իմ զարշապարք.
Ազգ երթայ, և ազգ գայ, և գործէ ձեռն իմ ի նոսա.
Ո՛հ ո՛հ, Տէր, յոյժ եմ հըզօր, զատեալ մեկնեալ ի մարդկանէ.
Հաճեաց թոյլ տանել ինձ զի ննջեցից ըզքուն երկրի։

*
* *

« Աւա՜ղ, և ամենայն խորոց երկնից եմ խելամուտ,
Զի զօրութիւն երկնամուխ յաչաց քոց յիս խաղացուցեր։
Հրաման տամ ցայգութեան ըզմըթին քօղ իւր մերկանալ.
Շըրթունք իմ յակնէ թըւեն զաստեղս և յանուանէ.
Եւ ընդ կոչելն իմ ըզնոսին ակնարկելով եւեթ իմով
Իւրաքանչիւր ի նոցանէ փութայ լինել ինձ յանդիման։
Շատ է թէ յամպս երկնից ըզձեռս իմ ձըգեցից ես զերկոսին
Առ ի կարճել ի ծոց նոցա ըզթօնըրնկէց մըրրկաց ըզխմունս։
Ընդ յոդդոդուն աւազովք տանեմ զքաղաքս հետակորոյս,
Ի թեւս հողմոց բըռնութեան շըրջեմ զլերինս վեր ի վայր.
Քան զանըրաւ տարածութիւնս հըզօրագոյն են կինք ոտից.
Գետ յաղթաջօղ յառին խմում կասեալ մերժի ի միակողմն.
Եւ սարսէ ծով ի գոչելոյն՝ հըրամանաւ սաստիւ իմով։
Յորժամ կարիք ինչ իցեն ժողովրդեանս, կամ պէտք խրատու,
Զաչս ի վեր ամբառնամ, և այց առնէ ոգի քո ինձ.
Գանդաչէ յայնժամ երկիր, և արեւ յանձն իւր վարանի.
Քո հրեշտակք՝ յակնճիռս յայլթիւս՝ լինին ընդ իս նախանձաբեկ։
Այլ երջանիկ ես ո՛չ եմ, Տէր, զի արարեր ինձ ծերանալ
Երկայնաւուրք, մի՛շտ հըզօր, զատեալ մեկնեալ ի մարդկանէ.
Հաճեաց թոյլ տանել ինձ զի ննջեցից ըզքուն երկրի։

*
* *

— « Ընդ լընուլ անձին հովուիս քոյով շընչովդ ազդեցութեան՝
Ասացին մարդիկ յիրեարս. « Արդարեւ դա ո՛չ է ի մէնջ ».
Կորակնեցան աչք իւրեանց հրեղէն աչացս իմ առաջի,
Զի նկատէին ի նոսին՝ իմն ինչ՝ ի վեր քան ըզմարդոյ։
Տեսի զի սէր չիջաւ բարձաւ, մըտերմութիւնն առ իս եղծաւ։
Քողաձիգ ծածկէին կոյսք յինէն՝ զուցէ ոչ արժեացին.
Վասն այնորիկ պատրուակ զանձամբ արկեալ սեւ ամպեղէն՝
Ի մէջ մարդկան շըրջեցայ, միայնացեալ տխուր ի փառս.

digitised by A.R.A.R.@

Եւ տուացի ընդ միտս իմ. «Ի՞մ արդ խիղճ ցանկանայցեմ».
Գլուխ իմ կարի է ծանրակիր առ ի ննջել ի գիրկս ուրուք։
Եթէ զաչաց ուրուք կուրայց, քրտամունք անդէն ընդ նոյն գրնան,
Մրրրիկք յիմում բնական ձայնի, փայլատակունք ի շրթունս իմ.
Նա՛, թող թէ սիրեսցեն. ամենեքին սարսեն յինէն.
Թէ բանայցեմ զգիրկս զրկամք, ահիւ ի ծունգս իմ անկանին.
Ոգւով կեցի ես Հզօր, զատեալ մեկնեալ ի մարդկանէ.
Հանեա՛ց թոյլ տանել ինձ զի ննջեցից ընդ քուն երկրի»։

*
* *

Եւ ամբոխ ժողովրդեանն յաղօթս կայր՝ մնացեալ եղիցն,
Զաչս ի բաց շրջեալ ահիւ ի լեռնէ Տեառն նախանձոտի։
Զի թէ զէտակն անդր ի վեր ամբառնային, շանթք խիտ ու խիտ
Մրրկախառն ի մրրայլ ծագաց ամպոց հատանէին,
Եւ լո՛յս հրեղէն զնոցա զաչսն հարեալ շլացութեամբ՝
Ընկրկեալս ակնկորեալս պահէր զնոսա յերկիր անկեալս։
Նոյն ժամայն բարձունք լերինն երեւէին, չէր անդ Մովսէս.
Ելաց ընդ Իսրայէլ. և յերկիր անդր Աւետեաց
Մեծ մրտայոյզ խորհրդովք խաղայր Յեսու, աժդոյն երեսօք,
Զի զնա ինքն յայն բազում ընտրեալ էր Տէր ամենակալ։

Թարգմ. ՏԻԳՐԱՆ ԽԼԹԷՆՃԵԱՆ — ԱԼՖՐԷՏ ՏԸ ՎԻՆԵԻ

# ՍՐՈՎ ՈՒ ՀՐՈՎ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

## ՀԵՆՐԻԿՈՍ ՍԵՆՔԻԵՎԻՉԻ

(Շար. տես էջ 41)

Թամբ մը բերին, որուն վրայ նստեցաւ լուռ և մտածկոտ։ Միջահասակ մարդ մըն էր, լայն ուսերով, կորովի և կարճվիզ։ Գլուխը խոշոր, դէմքը պղնձագոյն, աչքերը սեւ և թաթարի աչքերու նման քիչ մ'առիշեղ։ Պեխերը գանգին երկու կողմէն խիտ փունջի ձեւով կը կախուէին։ Դէմքին վրայ նկարուած էին զօրաւորութիւն և յանդգնութիւն։ Ունէր, եթէ կարելի է այսպէս ըսել, վանդակեան հանճարութիւն մը՝ որ զինուորները կը հեռացնէր իրմէ. Արժամանի մ'իշխանական արժանապատուութեան հետ՝ թաթարի մը խորամանկութիւնը, աննենգ բարեմտութեան հետ՝ վայրագութիւն։ Թամբին վրայ նստած՝ քիչ մը հանգստանալէն վերջ, ոտք ելաւ, և առանց շնորհակալութեան խօսք մ'ըսելու, ինչպէս ամէնքը կը սպասէին, արագութեամբ գնաց դիակները դիտելու։

— Շինակա՛ն, — մրմռաց տեղակալը։

Անծանօթը ուշադրութեամբ կը զննէր սպաննուածներուն դէմքերը, և զգուշակած ըլլալը հաւկցալի մը պէս՝ գլուխը կը տանէր ու կը բերէր։ Այս դանդաղ քայլերով և մէջքին վրայ զօտին փնտռելով, որուն մէջ կարծես ձեռքերը կ'ուզէր խոթել, դարձաւ դէպի տեղակալը։ Երիտասարդ սպային անախորժ երեւցաւ կախաղանէ նոր ազատուող մարդու մը այս հպարտ հանդարտութիւնը։

Երգիծանօք ըսաւ. — Կարծեմ աւազակներու մէջ ծանօթներ կը փնտռէիր, կամ անոնց հոգւոյն համար լիթանիա կ'ըսէիր։

digitised by A.R.A.R.@